ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 6

(նիստը կայացել է 2022 թվականի ապրիլի 4-ին)

Մանկավարժական խորհրդի նիստին մասնակցում էին խորհրդի 97 անդամից 92-ը(5 բացակա), դիտորդներ Դ. Դումոյանը և Ն. Մխիթարյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդներ Անժելա Կարապետյանի, Նվարդ Հովսեփյանի, Տաթևիկ Մելքոնյանի և Դիանա Մինասյանի ներկայացրած զարգացման ծրագրերի քննարկում
2. Մանկխորհրդի թեկնածուի ընտրություն փակ քվեարկությամբ

1. ԼՍԵՑԻՆ՝ դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդներ Անժելա Կարապետյանի, Նվարդ Հովսեփյանի, Տաթևիկ Մելքոնյանի և Դիանա Մինասյանի ներկայացրած զարգացման ծրագրերի քննարկում

Զարգացման ծրագրերը ներկայացնելու համար ժամանակավոր պաշտոնակատար Դ. Մինասյանը առաջարկեց սահմանել 10 րոպե: Ելույթների հաջորդականությունը որոշվեց ըստ այբբենական կարգի՝ Ա. Կարապետյան, Ն. Հովսեփյան, Տ. Մելքոնյան, Դ. Մինասյան:

Ելնելով առաջարկություններից՝ մանկավարժական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Համաձայն ՀՀ կառավարության 2010 թ-ի մարտի 4-ի հ. 319-Ն որոշման 13.1-ին կետի՝ զարգացման ծրագրերը ներկայացնելու համար հավակնորդներին տրամադրել հավասար ժամանակ՝ 10-ական րոպե:

2. Ելույթների հաջորդականությունը սահմանել ըստ այբբենական կարգի՝ Անժելա Կարապետյան, Նվարդ Հովսեփյան, Տաթևիկ Մելքոնյան և Դիանա Մինասյան:

Համաձայն ՀՀ Կառավարության 2010 թ-ի մարտի 4-ի հ. 319- Ն որոշման՝ իրենց ծրագրերը ներկայացրին դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդներ Անժելա Կարապետյանը, Նվարդ Հովսեփյանը, Տաթևիկ Մելքոնյանը և Դիանա Մինասյանը և պատասխանեցին ուսուցիչների հարցերին: Ծավալվեց քննարկում:

2. ԼՍԵՑԻՆ՝ հաշվիչ հանձնաժողով ստեղծելու մասին

Ծրագրերը ներկայացնելուց հետո առաջարկվեց ստեղծել հաշվիչ հանձնաժողով: Ուսուցիչներն առաջարկեցին Ն. Աբրահամյանի, Ն. Նիկոյանի և Ա. Մանուկյանի թեկնածությունները:

Ելնելով առաջարկություններից՝ մանկավարժական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Քվեարկության արդյունքները ներկայացնելու համար բաց քվեարկությամբ ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝

1. Ն. Նիկոյան
2. Ն. Աբրահամյան
3. Ա. Մանուկյան

Անցկացվեց փակ քվեարկություն, որին մասնակցեց մանկխորհրդի 92 անդամ:

3. ԼՍԵՑԻՆ՝ հաշվիչ հանձնաժողովի ներկայացրած արդյունքները:
Հանձնաժողովը ներկայացրեց փակ քվեարկության արդյունքը. ձայները բաշխվել են հետևյալ կերպ.
1)Ա. Կարապետյան – 0 կողմ
2) Ն. Հովսեփյան – 16 կողմ
3) Տ. Մելքոնյան – 73 կողմ
4) Դ. Մինասյան – 2 կողմ
5) Բացակա - 5
Անվավեր է ճանաչվել 1 քվեարթերթիկ

Ելնելով փակ քվեարկության արդյունքներից՝ մանկավարժական խորհուրդը
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է
Երևանի Ա. Պ. Չեխովի անվան № 55 դպրոցի տնօրենի՝ մանկավարժական խորհրդի կողմից ընտրված թեկնածու համարել առավելագույն ձայներ ստացած Տաթևիկ Մելքոնյանին:

Տնօրենի պարտականությունները կատարող՝ Դ. Մինասյան

Քարտուղար՝ Ֆ.Գառնիկյան